600.0077.31.10.02.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հոկտեմբերի 2002 թվականի № 77Ա
քաղ.Երևան

«ՀԱՅԳԱԶԱՐԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ №0050, № 0051 ԵՎ №0055 ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածը, «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի բ) կետը, 23-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի հունվարի 30-ի № 4 որոշմամբ սահմանված կարգը՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «Հայգազարդ» փակ բաժնետիրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում ջերմային էներգիայի արտադրության № 0050 և փոխադրման №0051 լիցենզիաների՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 2000 թվականի դեկտեմբերի 18-ի №28 որոշմամբ սահմանված գործողության ժամկետները երկարաձգել մինչև 2005 թվականի դեկտեմբերի 18-ը:

2. «Հայգազարդ» փակ բաժնետիրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում ջերմային էներգիայի բաշխման № 0055 լիցենզիայի՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 2001 թվականի փետրվարի 12-ի №5 որոշմամբ սահմանված գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2006 թվականի փետրվարի 12-ը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Վ. ՄՈՎՍԵՍՅԱՆ**

ք.Երևան
31 հոկտեմբերի 2002 թ.
ժամը 17^{00}